ԱՐՏՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը բացեց մարդկային պատմության նոր դարագլուխը՝ սոցիալիզմի դարագլուխը։ Ստեղծվեց համաշխարհային սոցիալիստական սիստեմ, որն այժմ ընդգրկում է Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի 14 սոցիալիստական պետություններ և երկրագնդի ազգաբնակչության մեկ երրորդը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր դարագլուխ բացեց նաև ցարական Ռուսաստանի նախկինում բոլոր ճնշված ազգերի և ժողովուրդների համար։ Այդ ազգերի և ժողովուրդների նոր դարագլուխը՝ նրանց սոցիալական և ազգային-ազատագրության, իրավահավասարության և վերածննդի դարագլուխն էր։

Հայ ժողովուրդը, ինչպես և Ռուսաստանի բոլոր ժողովուրդները բռնեցին սոցիալիզմի մայրուղին։ Հեշտ չէր այդ ճանապարհը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մեր ժողովուրդը հաղթահարեց անասելի դժվարություններ և զրկանքների ու զոհողությունների գնով իրագործեց սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը՝ երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական և տեխնիկական վերակառուցումը, կուլտուրական հեղափոխությունը։ Սոցիալիզմի կառուցումով նա կերտեց իր ծաղկուն այսօրը։ Մեր ժողովրդի, ինչպես և բոլոր եղբայրական ժողովուրդների վերածնունդը խարսխվում է սոցիալիզմի վրա և արտահայտություն է այն վիթխարի սոցիալ-տնտեսական և կուլտուրական վերափոխումների, որոնք իրագործվեցին սոցիալիզմի կառուցման հնգամյակների ընթացքում:

Անշուշտ, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին, արդեն իսկ մեր ժողովրդի վերածննդի օրն էր, այն իմաստով, որ հայ ժողովրդի արևելյան հատվածը փրկվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից։ Սակայն ժողովրդի վերածնունդը դրանով չի սահմանափակվում։ Այդ վերածնունդը իր արտահայտությունը գտավ մի շարք վերափոխումներում։ Շարադրենք այդ վերափոխումներից կամ վերածննդի դրսևորումներից կարևորները։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հայտնի է, որ Արևելյան Հայաստանում հայկական պետականության վերացումը տեղի ունեցավ 1045 թ., և ինը դար շարունակ հայ ժողովուրդը զրկված էր իր ազգային պետականությունից։

Սոցիալիստական ազգային պետականության ստեղծումը՝ Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի վերածննդի առաջին դրսևորումներ։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության շնորհիվ ազատագրված ժողովուրդները պատմական կարճ ժամանակամիջոցում թռիչք կատարեցին դարավոր տնտեսական հետամնացությունից դեպի ժամանակակից բազմաճյուղ արդյունաբերությունը և գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական և տեխնիկական վերակառուցումը։ Սոցիալիզմի կառուցման հնգամյակներում Սովետական Հայաստանում 16 միլիարդ ռուբլու կապիտալ ներդրումների շնորհիվ հիմք դրվեց և ստեղծվեցին 600-ից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Երբեմնի արորի, չութի Հայաստանն այսօր իր արդյունաբերական արտադրանքի 160 տեսակներ արտահանում է ոչ միայն Սովետական Միության հանրապետությունները, սոցիալիզմի երկրները, այլև զարգացած կապիտալիստական երկրներ։

Արմատական վերակառուցման ենթարկվեց գյուղատնտեսությունը, որտեղ մուտք գործեցին մեքենան և էլեկտրականությունը։ Հայաստանի բոլոր գյուղերը ենթարկվեցին էլեկտրիֆիկացման, լայն կիրառում գտավ էլեկտրականությունը գյուղատնտեսության արտադրության մեջ։ Լայն ծավալ ստացավ գյուղերում նոր տների կառուցումը, շրջանային և միջգյուղային ավտոտրանսպորտը, օդային տրանսպորտը։

Սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծումը՝ երկրորդ դրսևորումն է մեր ժողովրդի վերածննդի։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ժողովրդի վերածննդի երրորդ դրսևորումը՝ կուլտուրական հեղափոխության շնորհիվ ժողովրդի կուլտուրական մակարդակի արմատական վերափոխումն է։

Ի՞նչ խոսք, մենք հինավուրց կուլտուրական ժողովուրդներից ենք և ոչ մի հիմք չունենք նսեմացնելու անցյալում հայ ժողովրդի մուծած ավանդը մարդկության քաղաքակրթության առաջընթացում։

Այսպես, օրինակ, չորրորդ դարի վերջին (396 թ.) մենք ունեցանք Մաշտոցյան մեր գրերը, որոնք մոտ 1600 տարվա ժամանակի քննությունը բռնեցին իրենց գիտական կառուցվածքի տեսակետից։ Քառասունից ավելի պատմագիրների մի փայլուն համաստեղություն ունեցանք, սկսած աշխարհում ճանաչում գտած պատմահայր Մովսես Խորենացուց և վերջացրած պատմաբան Միքայել Չամչյանով։ Փիլիսոփաների և գիտնականների մի պայծառ համաստեղություն՝ Եղնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, մաթեմատիկոս, տիեզերագետ, աշխարհագետ Անանիա Շիրակացի, իրավագետ Մխիթար Հրոշ, բժշկապետեր Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ, հանճարեղ ճարտարապետներ, Ախթամարի կառուցող Մանվել ճարտարապետ և Անիի կաթողիկեի կառուցող, Պոլսի Այա-Սոֆիայի գմբեթի նորոգող Տրդատ ճարտարապետ, միջնադարյան բանաստեղծության գագաթներ՝ Գրիգոր Նարեկացի, Ֆրիկ, Սայաթ-Նովա, նկարիչներ՝ Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Միքայել Նաղաշ, Հովնաթաններ։ Կարելի է և շատ ու շատ լայնացնել արվեստի, գիտության հայ խոշորագույն գործիչների ցանկը։ Մեր ժողովուրդը ունեցել է նաև միջնադարյան տիպի իր բարձրագույն դպրոցները, համալսարանները, որտեղ ուսումնա-

սիրում էին բացի աստվածաբանությունից, լեզուներ, փիլիսոփայություն, բնագիտություն, բժշկություն, ալքիմիա, քնարերգություն, ճարտասանություն, նկարչություն, գրչության արվեստ, երաժշտություն։ Այդպիսի բարձրագույն դպրոցներից էին Անիի բարձրագույն դպրոցը, Գլաձորի համալսարանը, Տաթևի համալսարանը, Հաղպատի, Սանահինի, Ծաղկաձորի բարձրագույն դպրոցները։ Խոշոր նվաճումներ է ունեցել անցյալում հայ թատրոնը, քանդակագործությունը և հատկապես հայկական մանրանկարչությունը։

Այս բոլորը պատմական ճշմարտություն է։

Սակայն չպետք է աչքաթող անել, որ այս կուլտուրական ոլորտում ընդգրկված է եղել համեմատաբար նոսր հասարակական շերտ, իսկ աշխատավորական զանգվածներում տիրապետել է անասելի խավարը, տգիտությունը, անգրագիտությունը։ Պատմական փաստ է, որ անգամ XX դ. սկզբներին, նախասովետական շրջանում մեր ժողովրդի տարրական գրագիտությունը 19—21 տոկոսից այն կողմ չէր անցնում։

Իսկ այսօր... մեր երկնակամարից իսպառ վերացված է անգրագիտությունը, մտցված է պարտադիր միջնակարգ 8-ամյա ուսուցում։ Հանրապետության ազգաբնակության 52 տոկոսն ունի բարձրագույն, ոչ լրիվ բարձրագույն և միջնակարգ կրթություն, 48 տոկոսը՝ տարրական և ոչ լրիվ միջնակարգ կրթություն։ Մի քանի թվեր ևս. այսօր դպրոցական ցանցում՝ 1600 դպրոցներում ընդգրկված են կես միլիոն երեխաներ, պատանիներ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ 70 հազար ուսանողություն։ Ունենք 90 հազարանոց ինժեներա-տեխնիկական մտավորականություն, շուրջ 9 հազար գիտական աշխատողներ, որոնք ուսումնասիրություններ են կատարում հանրապետության 106 գիտահետազոտական ինստիտուտներում։ Մեր հանրապետությունում այժմ կա՝ այնքան ուսուցչություն, որքան աշակերտներ 1913 թվականին՝ 35 հազար։ Մենք այսօր ունենք շուրջ 2 հազար ճարտարապետներ, 500-ից ավելի լրագրողներ, հարյուրավոր այլ ստեղծագործական կադրեր գրողներ, նկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, դերասաններ և այլն։ Առաջ է եկել գյուղական ժողովրդական մտավորականություն, որի կազմի մեջ են մտնում բարձրագույն կրթություն ունեցող գյուղական կադրերը՝ բժիշկը, գյուղատնտեսը, ուսուցիչը, ինժեները, էլեկտրատեխնիկը, զոոտեխնիկը, մեխանիզատորը և այլն։

Համառոտակի նշենք մեր ժողովրդի ներդրումը Սովետական Միության կուլտուրայի, գիտության և արվեստի մեջ։

Համաշխարհային հռչակ է վայելում հայ աստրոֆիզիկոսների և աստղագետների Բյուրականի դպրոցը՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ։ Համաշխարհային ճանաչում են գտել եղբայր Ալիխանյանների կոսմիկական ճառագայթների ուսումնասիրման Արագածի կայանը, հայ մաթեմատիկոսների ներդրումը ֆունկցիաների տեսության մեջ՝ ակադեմիկոս Արտաշես Շահինյանի գլխավորությամբ, ռուս հանճարեղ ֆիզիոլոգ Պավլովի գործը շարունակող, Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամ՝ Էդրաս Հասրաթյանը։ Ընդհանուր ճանաչում են գտել ճարտարապետ Կարո Հալաբյանը, Հոկտեմբերյան հեղափոխության երգիչ, մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը, աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, նկարիչ՝ Մար-

տիրոս Սարյանը, կատարողական արվեստի վարպետները և ուրիշներ։ Իված անուններից բացի գալիս է տաղանդավոր երիտասարդ մի սերունդ, որը համակված իր ժողովրդի առաջ պարտքի և պատասխանատվության զգացումով, առաջիկայում պետք է ծավալի, հարստացնի իր ժողովրդի ավանդը, ներդրումը թե Սովետական Միության և թե համաշխարհային կուլտուրայի, գիտության և տեխնիկայի բնագավառներում։

Շնորհիվ կուլտուրական այս աննախընթաց վերափոխման, Սովետական Միության բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, դարձան պատմության և իրենց ճակատագրի գիտակցական ստեղծագործողները և տնօրինողները, հսկայական չափով ու թափով բարձրացավ բոլոր սովետական ժողովուրդների ինտելեկտուալ, մտավոր գործունեությունն ու ակտիվությունը։

ԺՈՂՈՎՐԴԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Հայ ժողովրդի վերածննդի շրջանը դրսևորումը՝ նրա սոցիալական կազմի կամ կառուցվածքի արմատական փոփոխությունն է մայր հայրենիքում։ Կազմավորվել է հայ սոցիալիստական ազգը, որում առաջին անգամ մարդկային պատմության մեջ, վերջ է տրված դասակարգային տրոհվածությանը, դասակարգային հակամարտությանն ու հակասությանը։

Համեմատենք հայ ազգի սոցիալական կազմը անցյալում և ներկայում։ Մեր դարասկզբին, նախասովետական շրջանում Անդրկովկասի հայ ազգաբնակչության սոցիալական կազմը տոկոսային հարաբերությամբ հետևյալ պատկերն է ներկայացրել. բուրժուազիա (արդյունաբերական և առևտրական)—7,3 տոկոս, բանվորությունը 16,2 տոկոս, ազնվականությունը, կալվածատերերը, բարձր հոգևոր դասը՝ 0,8 տոկոս, արհեստավորներ, տնայնագործներ, մանր առևտրականներ՝ 5,7 տոկոս, ունևոր գյուղացիներ՝ 9,1 տոկոս, միջակ գյուղացիներ՝ 28,1 տոկոս, չքավոր գյուղացիներ՝ 32,8 տոկոս, ընդամենը 100 տոկոս։ Այսպիսով, Անդրկովկասի հայ ազգաբնակչության 17,2 տոկոսը շահագործող դասակարգեր էին (բուրժուազիա, ազնվականներ, կալվածատերեր, գյուղական բուրժուազիա), 16,2 տոկոսը՝ բանվորություն, 66,6 տոկոսը՝ սեփականատեր, աշխատավորական տարրեր (միջակ և չքավոր գյուղացիներ, արհեստավորներ, տնայնագործեր)։

Սոցիալիզմի հաղթանակը մեր հայրենիքում, երկրի ինդուստրացումն ու կոլեկտիվացումը արմատապես փոխեցին ժողովրդի սոցիալական կազմը, պատմության գիրկն անցան շահագործող դասակարգերը։ Այսօր ազգը կազմված է վերափոխված բանվոր դասակարգից՝ 40 տոկոս, կոլտնտեսային գյուղացիությունից՝ 38 տոկոս և ծառայողներից, մտավորականներից՝ 22 տոկոս։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամն է, որ ազգը հանդես է գալիս իր բարոյա-քաղաքական միասնությամբ և ընթանում է դեպի սոցիալական միատարրության ուղիով։

ԼՈՒՅՍԸ ԵՎ ՀՈՒՅՍԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԴԵՊԻ ԴԱՂԹՈՂԱԽՆԵՐԸ

Հայ ժողովրդի վերածննդի հինգերորդ դրսևորումը մշակույթի ծաղկումն է բուն մայր հայրենիքում և այդ ասպարեզում գաղթօջախների և մայր հայրենիքի դերերի փոփոխումը։

Մեր ժողովրդի մշակույթը սկսած հեթանոսական շրջանից ընդհուպ մինչև XVI դարը զարգացել է մայր հողի վրա, Հայոց աշխարհում, մեր լեռնաստանում՝ չնայած այն դժնդակ արտաքին և ներքին պայմաններին և ասպատակություններին, որոնց ենթակա է եղել մեր ժողովուրդը այդ դարերում։ Այդ ասպատակություններից էին մինչև V դարը՝ հռոմեացիների և պարսիկների արշավանքները, VII դարում՝ արաբական, IX—X դարերում՝ սելջուկների, XIII դարում՝ մոնղոլների, Չինգիզ-խանի, XIV—XV դարերում՝ թուրքմեննե-րի, Լենկ-Թեմուրի, XVI—XVII դարերում՝ պարսիկների և օսմանցիների արշավանքները։

Այդ անվերջ ու ահավոր ասպատակությունների ու արշավանքների հետևանքով սկսվեց արտագաղթը դեպի Վրաստան, Լեհաստան, Ուկրաինա, Հունգարիա, Ղրիմ, Հյուսիսային Կովկաս, Հնդկաստան, Իտալիա, Հոլանդիա, Ֆրանսիա և այլուր։ Հատկանշական է, որ առաջին հայկական տպարանները XVII դարում հիմնվում են Լվով քաղաքում, Միլանում, Հռոմում, Վենետիկում, Ամստերդամում, Նոր Ջուղայում, իսկ XVIII դարում՝ Մադրասում, Պետերբուրգում։ Այս գաղթօջախներում էին գերազանցապես կենտրոնացած հայ մամուլը, հայ տպագիր գիրքը, հայ գիտական և քաղաքական միտքը և այլն։ Առաջին պարբերականը՝ «Ազդարարը» լույս տեսավ 1794 թ. Մադրասում (Հընդկաստան), առաջին հայ տպագիր գրքերը՝ 1512—1513 թթ. լույս տեսան Վենետիկում (Իտալիա) և այլն։

XVIII դարից և XIX դարի սկզբներին հայ կուլտուրայի և քաղաքական-հասարակական գործունեության կենտրոններն են դառնում Արևմտյան Հայաստանի համար՝ Պոլիսը, իսկ Արևելյան Հայաստանի համար՝ Թիֆլիսը։

XIX դարում և նոր դարասկզբին անգամ հայ բուրժուազիան և պրոլետարիատը կազմավորվում են ու գործում նույնպես, գերազանցապես, հայրենիքից դուրս։ Գաղթօջախներից էր գալիս լույսը դեպի հայրենիք, որտեղ իշխում էր խավարը, տգիտությունը, ազգային ճնշումը։

Ահա թե ինչպես է նկարագրել անգամ XIX դարի առաջին կեսին բուն հայրենիքում տիրող խավարը մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը.

«Էն ինչ շունչ կըլի, որ էս նոր հոգին
Փչի, վերկացնի ֆնից մեր ազգին,
Էն ինչ ձեռ կըլի, որ մեր աշխարհին
Էլ էղ սիրտ տա ու կանգնեցնի կրկին»[1]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն էր, որ արթնացրեց քնից մեր ազգին, սիրտ տվեց մեր աշխարհին։ Այս տասնամյակների ընթացքում արմատապես փոխվեց մեր հայրենիքի և գաղթօջախների դերը մեր ժողովրդի առաջընթացում։ Նորից, բայց այս անգամ այլ որակով ու ծավալով, մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը դարձավ հայ ժողովրդի մշակույթի, գիտության, տեխնիկայի, արվեստի, քաղաքական մտքի օրրանը, կենտրոնը։ Այսօր հայ մշակույթի և արվեստի լույսը սփռվում է ու տարածվում Սովետական Հայաստանից՝ մայր հայրենիքից դեպի գաղթօջախները։ Դարեր շարու-

---

[1] Խ. Աբովյան, Երկեր, հատ. 4, էջ 25։

նակ արտագաղթ է եղել մայր հայրենիքից, մեր օրերում հակառակն է տեղի ունենում՝ ներգաղթ։ Այսօր սփյուռքը, սփյուռքահայությունն իր բախտն ու հարատևությունը կապել է միայն մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի բարգավաճման, զարգացման, նրա առաջընթացի հետ։

ՀՈԳԵԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ

Հայ ժողովրդի վերածննդի վեցերորդ դրսևորումը ժողովրդի հոգեկան կերպարի վերափոխումն է։ Հարկավ, ժողովուրդների հոգեկան կերպարի արմատական և զանգվածային վերափոխման համար պահանջվում է ավելի երկար ժամանակ, քան կես դարը, մանավանդ որ այդ կես դարի ընթացքում Սովետական Միության ժողովուրդները, այդ թվում՝ հայ ժողովուրդը կրեցին քաղաքացիական պատերազմների, օտարերկրյա ինտերվենցիայի և երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքների հետևանքները։

Եվ չնայած այդ աննպաստ պայմաններին, սոցիալիստական հասարակարգը, նրա աննախընթաց նվաճումները երկրի էկոնոմիկայի և մշակույթի ասպարեզներում, թեև դանդաղ, բայց որոշակի փոփոխություն մտցրին ժողովրդի հոգեկան կերպարի մեջ։ Փոխվել է աշխատավորական զանգվածների վերաբերմունքը դեպի շահագործումից ազատ աշխատանքը, թեև այդ ասպարեզում դեռևս հսկայական է երկարատև դաստիարակության դերը։ Փոխվել է այդ զանգվածների վերաբերմունքը դեպի հանրային սեփականությունը, թեև դեռևս գոյություն ունեն այդ սեփականության հափշտակումները, գողությունը, կաշառակերությունը, խարդախություններ, որոնց դեմ մաղաչափ անգամ չի կարելի թուլացնել պայքարը սոցիալիստական հասարակարգին անհարիր այդ երևույթները արմատախիլ անելու մեր հասարակական կյանքից։

Փոխվել է վերաբերմունքը դեպի ժողովուրդները։ Սովետական ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի հոգեկան կերպարում արմատավորվում է սոցիալիստական ազգին հատուկ հումանիզմը, բարեկամական, եղբայրական վերաբերմունքը դեպի այլ ժողովուրդները, համագործակցելու պատրաստակամությունը այդ ժողովուրդների հետ, ամրապնդելու բարեկամությունը և այլն։ Սոցիալիզմի հաղթանակով վերջ է տրված ժողովուրդների մեջ դարերով արմատավորված «միայնակության», «եթիմի», «մոռացվածի» հոգեբանությունը։ Սովետական ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի հոգեկան կերպարի մեջ հարաճուն ամրապնդվում է այն համոզումը, այն զգացումը, որ ինքը մենակ չէ այս աշխարհում, «բարձիթողի արված չէ», «որբ չէ», Թումանյանի «զրկված ու զարկված հայրենիքը» չէ, այլ հավասարն է հավասարների հզոր և անկործան ընտանիքում։

Կարելի է շատ խոսել սոցիալիզմի հաղթանակով պայմանավորված ժողովրդի հոգեկան կերպարի փոփոխումների այլ դրսևորումների մասին, ինչպես նաև այն դժվարությունների և հակասությունների մասին, որոնց հանդիպում է այդ վերափոխման ընթացքը։ Սակայն բավականանք հոգեկան կերպարի վերը նշած շարադրանքով։

ՎԵՐԱՏՆՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՅՐՈՒՂԻՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը իր ծրագրում ազգերի հետագա զարգացման մայրուղին բնորոշեց որպես ծաղկում և մեր-

ձևում: Մեկը առաջանում է և պայմանավորվում մյուսով. ծաղկումը տանում է դեպի մերձեցում, մերձեցումը նպաստում է, խթան է հանդիսանում ազգերի հետագա ծաղկման, նրանց փոխհարստացման: Մերձեցումը ազգերի մեջ ամեն տեսակի՝ տնտեսական, կուլտուրական, տեխնիկական կապերի հաստատումն է, նրանց խորացումը, նրանց ծավալումը։ Մեր օրերում առանց այդ կապերի չի կարող տեղի ունենալ որևէ ժողովրդի առաջընթաց։ Այդ կապերի միջոցով է, որ մի ժողովուրդ ծանոթանում և յուրացնում է ուրիշ ժողովուրդների նվաճումները, այդ կապերի շնորհիվ է, որ նա տիրապետում է ժամանակակից գիտության, տեխնիկայի և արվեստի բարձունքներին, և իր համար դրանք ելակետ դարձնելով՝ ապահովում է իր առաջադիմությունը։

Գիտության, տեխնիկայի, արվեստի աննախընթաց զարգացման և հեղաշրջումների այս դարում ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ չի կարող առաջ գնալ, հենվելով, ապավինելով միայն իր ներքին, մտավոր ու նյութական ռեսուրսների, միջոցների, աղբյուրների, հնարավորությունների վրա։

Ժամանակին Մարքսն ասել է. «Ազգերը պետք է սովորեն միմյանցից»։ Այս դրույթը իր խորիմաստ և ժողովուրդների հետագա բախտի համար վճռական նշանակություն ունի մեր օրերում և հատկապես սոցիալիզմի հաղթանակած երկրներում։

Սովետական Միության 50 տարվա պատմության փորձը ցույց է տալիս, որ որքան զարգացած, ծաղկուն է տվյալ սոցիալիստական ազգի էկոնոմիկան և մշակույթը, այնքան ծավալուն են և խորը այդ սոցիալիստական ազգի ամեն տեսակի կապերը և մերձեցումը եղբայրական ժողովուրդների հետ։ Մյուս կողմից էլ տվյալ սոցիալիստական ազգի տնտեսական և կուլտուրական կապերի ծավալումը, նրանց մերձեցումը եղբայրական ժողովուրդների հետ խթանում է այդ սոցիալիստական ազգերի հետագա ծաղկումը, ինչպես և ժողովուրդների հոգեկան կերպարի միջև ընդհանուր, նոր, կոմունիստական գծերի առաջացումն ու ծավալումը։ Տեղի է ունենում փոխհարստացման համակողմանի, բազմակողմանի պրոցես։ Տեղի է ունենում ժողովուրդների բարեկամության և համագործակցության ամրապնդում՝ ուղղված նոր աշխարհի, կոմունիստական հասարակարգի կառուցման վեհ գործին։

Սա է վերածնված ժողովուրդների մայրուղին։

Ամեն մի խոշընդոտում սոցիալիստական ազգերի զարգացման երկու պրոգրեսիվ տենդենցների՝ ծաղկմանն ու մերձեցմանը, աղավաղումն է կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության և տեսության։ Այդ աղավաղման քաղաքական բնութագիրն է՝ տուրք տալը կամ տեղական նացիոնալիզմին կամ թե մեծապետական շովինիզմի մնացուկներին։

Ինչո՞ւմ կարող են արտահայտվել տեղական նացիոնալիզմի մնացուկները արդի ժամանակաշրջանում։ Նրանք կարող են արտահայտվել ազգային մեկուսացման, առանձնացման ձգտման մեջ, ազգային սահմանափակության, սնապարծության, դեպի այլ ժողովուրդների կուլտուրական արժեքների և նվաճումների անտեսման մեջ։ Այս մնացուկները հարված են հասցնում սովետական ժողովուրդների փոխադարձ վստահության, բարեկամության և եղբայրական համագործակցության ամրապնդման գործին։

Ինչո՞ւմ կարող են արտահայտվել մեծապետական շովինիզմի մնացուկներն արդի ժամանակաշրջանում։ Նրանք կարող են արտահայտվել սոցիա-

լիզմի ժամանակ ազգերի գոյության բացասման մեջ, իբր թե ազգերն իրենց գարն ապրած սոցիալական կատեգորիաներ են, իբր հասել է ժամանակը ձուլելու բոլոր ազգերը մեկ ազգի մեջ, իբր սոցիալիստական ազգերի հատկանիշները արգեն «մարում են», իբր սովետական ազգերի մայրուղին ներկայումս «փոխադարձ ասիմիլյացիան է» և հանրապետությունների «դենացիոնալիզացիան», որը թելադրում է արագացնել ազգային պետականության լիկվիդացումը և այլն։ Այս մնացուկները նույնպես արգելակում են սովետական ազգերի օրինաչափ զարգացումը, կոմունիստական հասարակարգի կառուցումը և վնաս են հասցնում սովետական ժողովուրդների փոխադարձ վստահության, բարեկամության և եղբայրական համագործակցության ամրապընդման գործին։

Վ. Ի. Լենինի ծննդյան 95-ամյակին նվիրված «Լենինիզմը՝ կուսակցության քաղաքականության գիտական հիմքն է» իր զեկուցման մեջ Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի քարտուղար ընկ. Լ. Ն. Դեմիշևը արդարացիորեն նշեց, որ «Կուսակցությունը տարել է և պետք է տանի վճռական պայքար նացիոնալիզմի և մեծապետական շովինիզմի մնացուկների դեմ» («Պրավդա», 1965, № 113)։

Ազգայնականության դեմ պայքարի երկու ճակատ—սա է կուսակցության լենինյան դրույթը արդի ժամանակաշրջանում։

Միայն նացիոնալիզմի և շովինիզմի մնացուկների դեմ երկու ճակատով պայքարը վերը նշված դրվածքով, կապահովի վերածնված սովետական ժողովուրդների առաջընթացը, նրանց հետագա զարգացման մայրուղին և աշխատավորական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակությունը։

Նշելով Հոկտեմբերյան հեղափոխության փառապանծ 50-ամյակը, սովետական ժողովուրդները հետադարձ հայացք են նետում 50 տարում ձեռք բերած պատմական վիթխարի վերափոխումների վրա, կրկնապատկում են իրենց բոլոր ուժերը, եռանդն ու կարողությունը մեծ Հոկտեմբերի հռչակած վերջնական նպատակին՝ կոմունիզմի լիակատար հաղթանակին հասնելու համար։